Հովհաննես Թումանյան

Նորից եկան էն հավքերը...

Նորից եկան էն հավքերը
Հեռվից եկան էն հավքերը,
Որ գարնանը կուգային:
Կանանչ կապա են հագել,

Կանանչ ճամփա են եկել,
Կանանչ մարգին ման կուգան:
Կանչե՛, հավիկը՛ս, կանչե՛
Կանչե՛, լավիկը՛ս, կանչե՛,
Կանչե՛, կանչիդ ես ղուրբան:

Նորից եկան էն հավքերը,
Հեռվից եկան էն հավքերը,
Որ ամառը կուգային:
Կարմիր կապա են հագել,
Կարմիր ճամփա են եկել,

Կարմիր վարդին ձեն կուտան:
Երգե՛, հավիկը՛ս, երգե՛,
Երգե՛, լավիկը՛ս, երգե՛,
Երգե՛, երգիդ ես ղուրբան:

Նորից եկան էն հավքերը,

Հեռվից եկան էն հավքերը,
Որ աշնանը կուգային
Դեղին կապա են հագել,
Դեղին ճամփա են եկել,
Ու խաշամին ման կուգան:

Խոսե՛, հավիկը՛ս, խոսե՛,
Խոսե՛, լավիկըս, խոսե՛,
Խոսե՛, խոսքիդ ես ղուրբան:

Նորից եկան էն հավքերը,
Հեռվից եկան էն հավքերը,

Որ ձմեռը կուգային:
Ճերմակ կապա են հագել,
Ճերմակ ճամփա են եկել,
Ճերմակ ձյունին ման կուգան:
Ձենե՛, հավիկը՛ս, ձենե՛,

Ձենե՛, լավիկը՛ս, ձենե՛,
Ձենե՛, ձենիդ ես ղուրբան:

1909